

2923


Ի. ԱՏՎԼԻՆ

ԱԳՐԱՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱ-  
ԿՈՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ  
ՇՈՒՐՋԸ ԽՈՀՄ-ՈՒՄ



3K33  
Ա-18

ՊԵՏՐԱՏ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴՐԱՊԱՆՈՒԹՅԱՆ  
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
ՅԵՐԵՎԱՆ • 1939



Պողոսարձներ բոլոր յերկրների, միացե՛ք

14 NOV 2009

5K33

Ա. 18.

Ի. ԱՏԱԼԻՆ

Դ

ԱԳՐԱՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ  
ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐԶԸ ԽՍՀՄ-ՈՒՄ

Ճառ մարքսիստ ազգագետների կոնֆերենցիայում<sup>11</sup>  
1929 թվի դեկտեմբերի 27-ին

ՊԵՏՀԱՆԱԿ  
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
ԵԵԲՆՎԱՆ • 1938

05.08.2013

2923

ԱԳՐԱՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ  
ՇՈՒՐԶԸ ԽՍՀՄ-ՈՒՄ

Ճառ մաքրելու ազգային մեջքի կոմիտենցիայում 1929 թվի  
պետական 27-ին

Բնկերներ : Մեր հասարակական-տնտեսական կյանքի հիմնական փաստը ներկա մոմենտում, —մի փաստ, վորն իր վրա յեղածնուամ ընդհանուրի ուշադրությունը, —կոլտնտեսային շարժման վիթխարի աճման փաստն ե:

Այժմյան կոլտնտեսային շարժման բնորոշ գիծն այն է, վոր կոլտնտեսություններ են մտնում վո'չ միայն չքաղորության առանձին խմբերը, ինչպես մինչև այժմ ե յեղել, այլև միջակն ել մասսայաբար կոլտնտեսությունները գնաց: Այս նշանակում ե, վոր կոլտնտեսային շարժումն աշխատավոր գյուղացիների առանձին խմբերի ու միջնախավերի շարժումից փոխարկվել ե գյուղացիության միլիոնավոր ու միլիոնավոր հիմնական մասսաների շարժման: Մրանով ել, ի միջի այլոց, հարկավոր ե բացատրել վիթխարի կարևորությունն ներկայացնող այն փաստը, վոր Հզոր, հարածունակալուակային հորդանքի (լավիա) բնույթ ընդունած կոլտնտեսային շարժումն իր ճանապարհին սրբում-տանում ե կուլակի դիմադրությունը, ջաշում ե կուլակությանը և ճանապարհ ե բաց անուամ սոցիալիստական լայն շինարարության համար չըուղում:

Բայց յեթե մենք հիմք ունենք պարծենալու սոցիալիստական շինարարության պրակտիկ հաջողություններով, ապա նույն այդ բանը չի կարելի ասել մեր քերիմական աշխատանքի հաջողությունների մասին եկոնոմիկայի բնագավառում՝ ընդհանրապես, գյուղատնտեսության բնագավառում՝ առանձնապես: Դեռ ավելին. հարկավոր ե ընդունել, վոր թեորիական միտքը հետո ե մնում մեր պրակտիկ հաջո-



1944  
39

И. СТАЛИН  
К ВОПРОСАМ АГРАРНОЙ  
ПОЛИТИКИ В СССР  
Армгиз—Издательство полит. литературы,  
Ереван, 1938

զություններից, վոր մեղ մոտ վարու չափի խշում կապակտիկ հաջողակությունների ու թեորիական մտքի զարդացման միջև։ Մինչդեռ անհրաժեշտ ե, վոր թեորիական աշխատանքը վո՞չ միայն հասնի պրակտիկ աշխատանքի հետեւից, այլև անցնի նրանից՝ զինելով մեր պրակտիկներին սոցիալիզմի հաղթության համար մղած նրանց պայքարում։

Յես այստեղ չեմ ընդարձակաբանի թեորիայի նշանակության մասին։ Ձեղ այդ բավականաչափ լավ հայտնի յէ։ Հայտնի յէ, վոր թեորիան, յեթե նա իսկապես թեորիա յէ, պրակտիկներին տալիս ե կողմնորոշման ուժ, հեռանկարի պարզություն, վաստահություն՝ աշխատանքի մեջ, հավատ գեպի մեր գործի հաղթությունը։ Այս ամենը հսկայական նշանակություն ունի—և չի կարող չունենալ—մեր սոցիալիստական շինարարության դործում։ Դժբախտությունն այն ե, վոր մենք սկսում ենք կաղալ հենց այդ բնագավառում, մեր եկոնոմիկայի հարցերի թեորիական մշակման բնագավառում։ Այլառես ել ինչո՞վ բացատրել այն փաստը, վոր մեղանում, մեր հասարակական-քաղաքական կյանքում տակավին դեռ դործածության մեջ են մեր եկոնոմիկայի հարցերի վերաբերյալ զանազան բուրժուական ու մանր-բուրժուական թեորիաներ։ Ինչո՞վ բացատրել, վոր այդ թեորիաներն ու թեորիկները մինչեւ այժմ ողատշաճ հակա-հարվածի չեն հանդիպում։ Ել ինչո՞վ բացատրել, վոր մարքս-լենինյան քաղաքանականության մի շարք հիմնական դրույթներ, վորոնք ամենավստահելի հակաթույն են բուր-ժուական ու մանր-բուրժուական թեորիաների դեմ, սկսում են մոռացության արվել, չեն ժողովրդականացվում մեր մանուլում, չըխուս ինչո՞ւ առաջին պլան չեն քաշվում։ Մի՞թե դժվար ե հասկանալ, վոր առանց մարքս-լենինյան թեորիայի բաղադրի վրա այդ բուրժուական թեորիաների դեմ անհաշտ պայքար մղելու՝ դասակարգային թշնամիների նկատմամբ լինակատար հաղթանակի հասնել անհնարին ե։

Նոր պրակտիկան ծնում ե նոր մոտեցում գեղի անցման ժամանակաշրջանի եկոնոմիկայի պրոբլեմները։ Այժմ նոր ձևով ե դրվում նեղի, դասակարգերի, շինարարության տեմզերի, զողման, կուսակցության քաղաքականության հարցը։ Պրակտիկայից հետ չմնալու համար հարկավոր ե

նոր իբաղբության տեսակետից այժմ ենթ զբաղվել բոլոր այդ սկզբաների մշակմամբ։ Առանց դրան անհնարին ե հաղթահարել մեր պրակտիկների զլուգներն աղբոտող բուր-ժուական թեորիաները։ Առանց դրան անհնարին ե արմատախիլ անել նախապաշտոմունքների ամրություն ստացած այդ թեորիաները։ Վորովհետև թեորիայի բնագավառում բուրժուական նախապաշտոմունքների դեմ մղած պայքարով միայն կարելի յէ հասնել մարքսիզմ-լենինիզմի դիրքերի ամ-բացմանը։

Թույլ տվեք անցնելու թեորիա կոչվող այդ բուրժուա-կան նախապաշտոմունքներից գոնե միքանիսի բնութաղըման և մեր շինարարության միքանի հանդուցային պրոբլեմները լուսաբանելու կարգով՝ ցուցադրելու նրանց սնունելությու-նը։

## I

### «ՀԱՎԱՍԱՐԱԿՇՈՒՈՒԹՅԱՆ» ԹԵՌԻՒՄՆ

Դուք, իհարկե, գիտեք, վոր կոմունիստաների մեջ մին-չե այժմ ել տարածված ե մեր ժողովրդական տնաեսու-թյան սեկտորների այսպիս կոչված «հավասարակցության» թեորիան։ Այդ թեորիան, իհարկե, վոչ մի ընդհանուր բան չունի մարքսիզմի հետ։ Սակայն նա, հենց այդ թեորիան քարոզվում ե աչերի բանակին պատկանող մի շարք անձերի կողմից։ Բայ այդ թեորիայի յենթալրգում ե, թե մենք ա-մենից առաջ ունենք սոցիալիստական սեկտոր, —սա մի յու-րատեսակ արկղ ե, —ե մենք բացի դրանից ունենք վոչ-սոցիա-լիստական, յեթե կուզեք՝ կապիտալիստական սեկտոր, —սա ել մյուս արկղն ե։ Այս յերկու արկղները գոնվում են տար-բեր ուկեների վրա ու խալզաղորեն առաջ են դրույմ՝ ա-ռանց իրար դիպչելու։ Յերկրաչափությունից հայտնի յէ, վոր զուգահեռ գծերը չեն հանդիպում միմյանց։ Սակայն այդ յերեկի թեորիայի հեղինակները կարծում են, թե այդ զուգահեռները յերբեք միմյանց հանդիպեն և, յերե նրանք հանդիպեն, մեղանում սոցիալիզմ կստացվի։ Ընդմին այդ թեորիան աչքաթող ե անում, վոր այսպիս կոչված «ար-կըզներե» հետեւ կանգնած են դասակարգերը, իսկ այդ

«արկղների» շարժումը տեղի յե ունենում դասակարգային կատաղի կովի կարգով, կյանքի ու մահվան կովի, «ու ում» սկզբունքով մզկող կովի կարգով:

Դժվար չե հասկանալ, վոր այդ թեորիան վոչ մի ընդհանուր բան չունի լենինիզմի հետ: Դժվար չե հասկանալ, վոր այդ թեորիան որյեկտիվորեն նպատակ ունի պաշտպանելու անհատական գյուղացիական տնտեսության դիրքերը, զինելու կուլակային տարրերին «նոր» թեորիական գենքով՝ կոլտնտեսությունների գեմ նրանց մղած պայքարում ու վարկաբեկելու կուտակությունների դիրքերը: Սակայն նա, այդ թեորիան, մինչև այժմ ել տարածված և մեր մամուլում: Յեկ չի կարելի ասել, թե այդ թեորիան լուրջ հականարկածի, մանավանդ կործանիչ հականարկածի հանդիպելու լինի մեր թեորետիկների կողմից: Այլ կերպ ել ինչո՞վ բատացըրել այդ անհեթեթությունը, յեթե վոչ մեր թեորիական մտքի հետամնացությամբ:

Մինչեռ բաժական եր միայն մարքսիզմի գանձարանից հանել վերաբոտադրության թեորիան ու այն հակառեկ սեկտորների հավասարակշռության թեորիային, վորպեսզի այդ վերջին թեորիայից հետք անդամ չմնար: Իրոք, վերաբոտադրության մարքսիստական թեորիան ուսուցանում Ն, վոր արդի հասարակությունը չի կարող զարդանալ՝ տարեցտարի կուտակումներ չանելով, իսկ առանց տարեցտարի ընդլայնված վերաբոտադրություն ունենալու՝ անհնարին և կուտակել: Սա պարզ ե ու հասկանալի: Մեր կենտրոնացած սոցիալիստական խոշոր արդյունաբերությունը զարդանում և ընդլայնված վերաբոտադրության մարքսիստական թեորիայի համաձայն, վորովհետև այն ամեն տարի աճում և իր ծավալով, ունի իր կուտակումները և յոթ-մզոնանոյ քայլերով առաջ և շարժվում: Բայց ժողովրդական տնտեսությունը մեր խոշոր արդյունաբերությամբ չի սպառվում: Ընդհակառակը, մեր ժողովրդական տնտեսության մեջ զեւսկ գերակշռում և մանր-գյուղացիական տնտեսությունը: Կարելի յե արդյոք ասել, թե մեր մանր-գյուղացիական տընտեսությունը զարգանում և ընդլայնված վերաբոտադրության սկզբունքով: Վո՞չ, այդ չի կարելի ասել: Մեր մանր-գյուղացիական տնտեսությունն իր մասսայական առումով

ըեցտարի վո՞չ միայն ընդլայնված վերաբոտադրություն չի իրականացնում, այլ, ընդհակառակը, նա միշտ չե, վոր հարավորություն ունի իրականացնելու մինչև իսկ պարզ վերաբոտադրությունը: Կարելի յե արդյոք արագացրած տեմպով առաջ շարժել մեր սոցիալիստականացրած ինգուստրիան՝ ունենալով այնպիսի գյուղատնտեսական բարդա, ինչպես մանր-գյուղացիական տնտեսությունն ե, վորն ընդլայնված վերաբոտադրության ընդունակ չե և բացի այդ գերակշռուղ ուժ ե մեր ժողովրդական տնտեսության մեջ: Վո՞չ, չի կարելի: Կարելի յե արդյոք քիչ թե շատ յերկարաւան ժամանակաշրջանի ընթացքում Խորհրդային իշխանությունն ու սոցիալիստական շինարարությունը խարսխել յերկու տարրեր հիմքերի վրա—ամենախոչըր ու միավորված սոցիալիստական արդյունաբերության հիմքի վրա և ամենամասնատված ու հետամնաց մանր-ասպրանքային գյուղացիական տնտեսության հիմքի վրա: Վո՞չ, չի կարելի: Այդ յերբեմե պետք ե վերջանա ամբողջ ժողովրդական տընտեսության լիակատար փլուզումով: Ել վո՞րտեղ և յելքը: Յելքն այն ե, վոր խոշորացնենք գյուղատնտեսությունը, այն ընդունակ դարձնենք կուտակման, ընդլայնված վերաբոտադրության և այլպիսով փոխակերպենք ժողովրդական տնտեսության գյուղատնտեսական բազան: Բայց ի՞նչպես խոշորացնենք այն: Դրա համար գոյություն ունի յերկու ուղի: Գոյություն ունի կապիտալիստական ուղի, վորի եյությունը գյուղատնտեսության խոշորացումն և՝ նրա մեջ կապիտալիզմ արմատավորելու միջոցով, մի ուղի, վորը տանում և դեպի գյուղացիության աղքատացումը և դեպի կապիտալիստական ձեռնարկությունների զարգացումը գյուղատնտեսության մեջ: Այդ ուղին մենք մերժում ենք, վորպես մի ուղի, վորն անհամատեղելի յե խորհրդային տնտեսության հետ: Գոյություն ունի մի այլ ուղի, սոցիալիստական ուղի: Վորի եյությունը կոլտստեսությունների ու խորհում տնտեսությունների արմատավորումն և գյուղատնտեսության մեջ, մի ուղի, վորը տանում և դեպի մանր-գյուղացիական տնտեսությունների միավորումը խոշոր կուեկտիվ տնտեսությունների մեջ, վորոնք զինված

են տեխնիկայով ու գիտությամբ, ու դեպի կապիտալիստական տարրերի արտամղումը հողագործության միջից։ Մենք կողմնակից ենք այս յերկրորդ ուղղուն։

Հետեւապես, հարցն այսպես ե դրված։ կամ մեկ ուղին, կամ մյուսը, կամ հետ—դեպի կապիտալիզմ, կամ առաջ—դեպի սոցիալիզմ։ Վոչ մի յերրորդ ուղի չկա և չի կարող լինել։ «Հավասարակշուության» թեորիան յերրորդ ուղի նշելու փորձ ե։ Յեվ հենց այն պատճառով, վոր նա հաշվի յե առնում յերրորդ (գոյություն չունեցող) ուղին, նու ուսպիշական ե, անտիմարքսիստական։

Այսպես ահա, բավկական եր միայն Մարքսի վերաբառության թեորիան հակադրել սեկտորների «Հավասարակշուության» թեորիային, վորպեսզի այս վերջին թեորիայից հետք անդամ չմնար։

Իսկ ինչո՞ւ այդ բանը չի արմում մեր մարքսիստակարգետների կողմից։ Այդ ո՞ւմն ե հարկավոր, վոր «Հավասարակշուության» ծիծաղաշրժ թեորիան տարածված լինի մեր մամուլում, իսկ վերաբատերության մարքսիստական թեորիան գրվածի տակ մնա։

## II

### «ԻՆՔՆԱՀՈՍԻ» ԹԵՌԻՒԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԵԶ

Անցնենք քաղաքանակենության մեջ յեղած յերկրորդ նախապաշարմունքին, բուրժուական տիպի յերկրորդ թեորիային։ Յես նկատի ունեմ «ինքնահոսի» թեորիան սոցիալիստական շինարարության գործում, մի թեորիա, վորը վոչ մի ընդհանուր բան չունի մարքսիզմի հետ, բայց ջանանիրարար քարողլում ե աջ բանակին պատկանող մեր ընկերների կողմից։ Այդ թեորիայի հեղինակները պնդում են մոռակորապես հետևյալը։ Մեզնում կապիտալիզմ կար, զարդանում եր ինդուստրիան կապիտալիստական բազայի վրա, իսկ դյուզը զնում եր կապիտալիստական քաղաքի հետեւ տարերայնորեն, ինքնահոսով, փոխակերպվելով ըստ կապիտալիստական քաղաքի պատկերի ու նմանության։ Յեթե բանն այսպես եր կապիտալիզմի որով, ինչո՞ւ չի կարող նույն այս

բանը տեղի ունենալ նաև խորհրդային տնտեսության որով, ինչո՞ւ դյուզը, մանր-պյուղացիական անտեսությունը չի կարող ինքնահոսի ուղիով գնալ սոցիալիստական քաղաքի հետեւց՝ տարերայնորեն փոխակերպվելով ըստ սոցիալիստական քաղաքի պատկերի ու նմանության։ Այս թեորիայի հեղինակներն այդ հիման վրա պնդում են, վոր դյուզը կարող ե ինքնահոսի կարգով գնալ սոցիալիստական քաղաքի հետեւց։ Այստեղից մի հարց արժե՞ արդյոք, վոր մենք տաքանանք խորհրդանությունների ու կոլտնտեսությունների կազմակերպման առթիվ, արժե՞ արդյոք, վոր մենք նիդակներ ջարդենք, յեթե գյուղն այնպես ել կարող ե սոցիալիստական քաղաքի հետեւց գնալ։

Ահա ձեզ ելի մի թեորիա, վորն որյեկտիվորեն նպատակ ունի նոր զենք տալու գյուղի կապիտալիստական տարերի ձեռքը՝ կոլտնտեսությունների գեմ նրանց մղած պայքարում։ Այդ թեորիայի անտիմարքսիստական եյությունը վոչ մի կասկածի յենթակա չե։

Տարորինակ չե՞ արդյոք, վոր մեր թեորետիկները գեռես ժամանակ չեն գտել վետրահան անելու (расчеховость) այդ տարօրինակ թեորիան, վորն աղբոտում ե մեր պրակտիկ-կոլտնտեսականների գլուխները։

Կասկած չկա, վոր սոցիալիստական քաղաքի առաջատար գերը մանր-պյուղացիական գյուղի նկատմամբ մեծ և ու անդնահատելի։ Հենց սրա վրա ել հիմնվում ե ինդուստրիայի փոխակերպող գերը գյուղատնտեսության նկատմամբ։ Բայց այդ գործոնը բավակա՞ն ե արդյոք, վորպեսզի մանր-պյուղացիական գյուղն ինքը գնա քաղաքի հետեւց՝ սոցիալիստական շինարարության գործում։ Վո՞չ, բավական չե։ Կապիտալիզմի որով գյուղը տարերայնորեն գնում եր քաղաքի հետեւց, վորովհետեւ քաղաքի կապիտալիստական տնտեսությունը և գյուղացու մանր ապրանքային տնտեսությունն իրենց հիմքում նույնատիպ տնտեսություն են։ Իհարկե, մանր-պյուղացիական ապրանքային տնտեսությունը գեռես կապիտալիստական տնտեսություն չե։ Բայց նա իր հիմքում նույնատիպ ե կապիտալիստական տնտեսության հետ, վորովհետեւ հենվում ե արտադրության միջոցների մասնակոր սեփականության վրա։ Անինը հաղար անդամ

իրավացի յե, յերբ նա Բուխարինի «Անցման ժամանակաշրջանի եկանոմիկային» («Էկոնոմիկա ուղղության պահանջման առաջնային գործություններում խոսում ե «գյուղացիության ապրանքային-կապիտալիստական տենդենցի» մասին՝ ի հակադրություն պրոլետարիատի սոցիալիստական տենդենցի<sup>1</sup>: Հենց սրանով ել բացատրվում ե, վոր «մանր արտադրությունը կապիտալիզմ ու բուրժուազիա յե ծնում շարունակ, ամեն որ, ամեն ժամ, տարե-բայնորեն ու մասսայական մասշտաբով» (Լենին): Հետևաբար, կարելի<sup>0</sup> յե արդյոք ասել, թե մանր-ապրանքային գյուղացիական տնտեսությունն իր հիմքում նույնատիպ ե քաղաքի սոցիալիստական արտադրության հետ: Ակներե և, վոր այդ չի կարելի ասել՝ չխզելով կապերը մարքսիզմի հետ: Այլապես լենինը չեր ասի, թե՝ «քանի դեռ մենք ապրում ենք մանր-գյուղացիական յերկրում, Ռուսաստանում կապիտալիզմի համար տնտեսական ավելի հաստատուն բաղա կա, քան կոմունիզմի համար»: Հետևաբար, սոցիալիստական շինարարության գործում ինքնահոսի թեորիան փուած, անտիլենինյան թեորիա յե: Հետևաբար, վորպեսի մանր-գյուղացիական գյուղը գնա սոցիալիստական քաղաքի հետեւց, անհրաժեշտ ե բացի բոլոր մնացած բաներից, արմատավորել գյուղում նաև խոշոր սոցիալիստական տնտեսություններ՝ խորհունտեսությունների ու կոլտնտեսությունների ձևով, վորպես սոցիալիզմի բազաներ, վորոնք սոցիալիստական քաղաքի գյուղական գյուղական գյուղում կարող են իրենց հետեւց տանել գյուղացիության հիմնական մասսաներին:

Բանը պարզ է: Սոցիալիստական շինարարության մեջ «ինքնահոսի» թեորիան անտիմարքսիստական թեորիա յե: Սոցիալիստական քաղաքը պետք ե իր հետեւց տանի մանր-գյուղացիական գյուղը՝ արմատավորելով գյուղում կոլտընաեսություններ ու խորհունտեսություններ և գյուղը նոր, սոցիալիստական յեղանակով փոխակերպելով:

Տարորինակ ե, վոր սոցիալիստական շինարարության մեջ «ինքնահոսի» հակամարքսիստական թեորիան մինչեւ

այժմ մեր թեորետիկ-ադրաբագեաների պատշաճ հականաբաժին չի հանդիպում:

### III

#### ՄԱՆՐ-ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ «ԿԱՅՈՒՆԻԹՅԱՆ» ԹԵՇՐԻԱՆ

Անցնենք քաղաքատնտեսության մեջ յեղած յերրորդ նախապաշարմունքին, մանր-գյուղացիական տնտեսության «կայունության» թեորիային: Ամենքին հայտնի յեն բուրժուական քաղաքատնտեսության առարկությունները մանր տնտեսության հանդեպ խոշորի ունեցած առավելության վերաբերյալ մարքսիզմի հայտնի թեղիսի դեմ, վորն իրը թե միայն արդյունաբերության մեջ ուժ ունի, բայց կիրառում չունի գյուղատնտեսության մեջ: Դավիդի ու Հերցի տիպի սոցիալ-դեմոկրատական թեորետիկները, վորոնք քարոզում են այդ թեորիան, փորձում ելին ընդամեն «հենվել» այն փառուի վրա, վոր մանր գյուղացին դիմացկում ե, համբերող, պատրաստ ե հանձն առնելու ամեն տեսակի զրկանքներ, միայն թե պաշտպանի իր հողի պատառը, վոր, դրա չնորհիվ, մանր-գյուղացիական տնտեսությունը կայունություն և հայտաբերում հողագործության մեջ խոշոր անտեսության դեմ մղած իր պայքարում: Դժվար չե հասկանալ, վոր այդպիսի «կայունություն» ամեն մի անկայունությունից վատ ե: Դժվար չե հասկանալ, վոր այդ անտիմարքսիստական թեորիան իրեն նպատակ ե դնում միայն մի բան—կապիտալիստական կարգերի գովարանումն ու ամրացումը: Յել հենց այն պատճառով, վոր նա այդպիսի նպատակ ունի, հենց այդ պատճառով ել մարքսիստներին հաջողվեց այնպես հեշտ ջախճախել այդ թեորիան: Բայց բանն այժմ այդ չե: Բանն ոյն ե, վոր մեր պրակտիկան, մեր իրականությունը նոր կաստարկներ ե տալիս այդ թեորիայի դեմ, իսկ մեր թեորետիկները տարորինակ կերպով չեն ցանկանում կամ չեն կարողանում այդ նոր զենքն ողոտագործել բանվոր դաստիարակի թշնամիների դեմ: Յես նկատի ունեմ հաղի մասնավոր սեփականության վոչնչացման պրակտիկան, չօղի ազգայնացման պրակտիկան մեղանում, մի պրակտի-

<sup>1</sup> Ըստգծումը լենինին ե: Խ. Ստ.:

հա, վորը մանր գյուղացուն ազատում և հողի իր պատաժին ստրկորեն նվիրված լինելուց և վրանով հենց հեշտացնութեա անցումը մանր գյուղացիական տնտեսությունից դեպի խոշոր, կոլեկտիվ տնտեսությունը:

Իրոք, Արեւմտյան Յեմբովայում մանր գյուղացուն ի՞նչն էր կապում, կապում է ու զեռ կապելու յէ նրա մանր-ապրանքային տնտեսության հետ: Ամենից առաջ և գյուղապետ իր սեփական հողի պատառի առկայությունը, հողի մասնագոր սեփականության առկայությունը: Նա տարի-ներով ժող էր կուտակում, վորպեսզի մի պատառ հող գնի՛ նու այդ պատառը զնել և և, հասկանալի յէ, չի ցանկանում սրանից բաժանմել՝ գերադասելով բոլոր ու ամեն տեսակի զրկանքներ կրել, գերադասելով վայրենության մեջ ընկնել, միայն թե որաշտպանի ու իր ձեռքին պահի հողի իր պատառը—իր անհստական տնտեսության հիմքը: Կարելի՞ յէ արդյոք տաել, վոր այդ Փակառըն իր այդ ձեռքի շարունակում և դործել նու մեղանում, խորհրդային կարգերի պայմաններում: Վո՞չ, չի կարելի տաել: Չի կարելի տաել, վորովհետեւ մեղանում հողի մասնավոր սեփականություն չկա: Յել հենց այն պատճառով, վոր մեղանում հողի մասնավոր սեփականություն չկա, մեղանում չկա նաև գյուղացու այն սարկական նվիրվածությունը հողին, վորը կա Արեւմուտքում: Իսկ այդ հանգամանքը չի կարող չհեշտացնել մանր-գյուղացիական տնտեսության անցումը կորտնտեսությունների ոելսերի վրա:

Ահա թե վորտեղ և այն բանի պատճառներից մեկը, վոր խոշոր տնտեսություններին գյուղում, կոլտնտեսություններին գյուղում հաջողվում և այնպիս հեշտությամբ ցուցադրել մեղանում, հողի աղղայնացման պայմաններում, իրենց գերազանցությունը մանր գյուղացիական տնտեսության անցումը կորտնտեսությունների ոելսերի վրա:

Ահա թե վորտեղ և խորհրդային աղբարային որենքների հեղափոխական մեծ նշանակությունը, որենքներ, վորոնք վոչնչացրին բացարձակ ունտան, վերացրին հողի մասնավոր սեփականությունը և հողի աղղայնացում հաստատեցին:

Բայց որանից հետեւում և, վոր մենք մեր տրամադրության տակ ունենք նոր փաստարկ բուրժուական տնտեսության:

դետների դեմ, վորոնք հոչակում են մանր-գյուղացիական տնտեսության կայունությունը խոչոր անտեսության դեմ մզած նրա պայքարում:

Հապա ինչո՞ւ մեր աղբարագետ-թեորիակիները բավականաշափ չեն ողտագործում այս նոր փաստարկը՝ բոլոր ու ամեն տեսակի բուրժուական թեորիաների դեմ իրենց մզած պայքարում:

Հողի աղղայնացում կենսագործելով՝ մենք յերկետ ենք ունեցել, ի միջի այլոց, այն թեորիական նախագրյալ-ները, վորոնք արդամ են «Կապիալի» յերբորդ հատորում, Մարքսի «Հավելյալ արժեքի թեորիաները» հայտնի դրամ և Լենինի աղբարային աշխատություններում, վորոնք թեորիական մտքի ամենահարուստ զանարան են ներկայացնում: Յես նկատի ունեմ ընդհանրապես հողային ունտայի թեորիան, առանձնապես բացարձակ հողային ունտայի թեորիան: Այժմ մօլորի համար պարզ և, վոր այդ աշխատությունների թեորիական դրույթները փայլուն կերպով հաստատեցին քաղաքում ու գյուղում կատարվող մեր սոցիալիստական շինարարության պատկերային:

Անհասկանալի յէ միայն, թե ինչո՞ւ Զայանավների ալիպի «Խորհրդային» տնտեսագետների հակագիտական թեորիաները պետք է աղատ տարածում գտնեն մեր մամուլում, իսկ Մարքսի-Լենինի հանձարեկ աշխատությունները հողային ունտայի ու բացարձակ հողային ունտայի թեորիայի մասին չպետք է մօլովդրականացնեն ու առաջին պլանը քաշվեն, պետք է գրվանի տակ մնան:

Դուք, յերեխ, հիշում եք Ենդեբսի հայտնի բրոցյուրը «Գյուղացիական հարցի» մասին: Դուք, իհարգե, հիշում եք, թե Ենդելսը վորչափ շրջահայց կերպով և մոտենում մանր գյուղացիներին ընկերային տնտեսության ուղին կոյեկարի անտեսության ուղին փոխագրելու հարցին: Թույլ ուղիք Ենդելսի բրոցյուրից մեջ բերելու համապատասխան ուղիք:

«Մենք մնականապես կանչեամ ենք մանր գյուղացու կողմէր: Մենք ունեն հաբարագոր բան ունելու յենք, վորպեսզի նրա համար ամենի տանելի մինի ապրելը, վորպեսզի նրա համար հեշտացնենք անցումը դեպի ընկերացնություն, այն զեղքում, յեթե նա վճռի այդ տնել: Իսկ այն դպրում, յեթե նու զեսու ի գիճակի մի լինի արդ վճռունելու:

յենք կջանումք նրան հետավորին չափ ավելի ժամանակ տար՝ իր հոգի պատռափ վրա գրա մասին մտածելու համար»<sup>1</sup>:

Դուք աւենում եք, թե Ենդելուը վորչափ շրջահայաց կերպով և մոտենում անհատական գյուղացիական տնտեսությունը կոլեկտիվիզմի ուելուրի վրա փոխադրելու հարցին: Ինչո՞վ բացատրել Ենդելսի այդպիսի՝ առաջին հայացքից չափաղանցացրած՝ շրջահայացությունը: Ինչի՞ց եր յելում նա այդ գեղքում: Ակներե և, վոր նա յելնում եր հողի մասնավոր սեփականության առկայությունից, այն փաստից, վոր գյուղացին ունի հողի «իր պատառը», վորից նրա, գյուղացու համար, դժվար կլինի բաժանմել: Այդպես և գյուղացիությունն Արևմուտքում: Այդպես և գյուղացիությունը կապիտալիստական յերկրներում, վորաեղ գոյություն ունի հողի մասնավոր սեփականություն: Հասկանալի յէ, վոր այստեղ հարկավոր և մեծ շրջահայտցություն: Կարելի՞ յէ արդյոք ասել, վոր մեղանում, ԽՍՀՄ-ում, այդպիսի դրություն կա: Վո՞չ, չի կարելի այդ ասել: Զի կարելի, վորովհետեւ մեղանում չկա հողի մասնավոր սեփականություն, վորը գյուղացուն թեեռում ե իր անհատական տնտեսությանը: Զի կարելի, վորովհետեւ մեղանում կա հողի ազգայնացում, վորը հեշտացնում ե անհատական գյուղացու անցումը կոլեկտիվիզմի ուելուրի վրա:

Ահա թե վորտեղ ե այն համեմատական հեշտության ու արագության պատճառներից մեկը, վորով վերջին ժամանակներու մեղանում զարգանում և կոլտնտեսային շարժումը:

Յավալի յէ, վոր մեր թեորետիկ-ադրաբաները դեռևս չեն փորձել պատշաճ պարզությամբ բացահայտել այդ տարրերությունը գյուղացու գրության մեջ մեղանութ և Արևմուտքում: Մինչդեռ այդպիսի աշխատանքը մեծադրույն նշանակություն կունենա վո՞չ միայն մեզ, խորհրդային աշխատազներիս համար, այլև բոլոր յերկրների կոմունիստների համար: Վորովհետեւ կապիտալիստական յերկրների պրոլետարական հեղափոխության համար միենույնը չե, թե իշխանությունը պրոլետարիատի կողմից վերցվելուց հետո առաջին խել որերից հարկ կլինի արդյոք այստեղ

սոցիալիզմ կառուցել հողի ազգայնացման բազայի վրա, թե առանց այդպիսի բազայի:

Նորերս ունեցած իմ յելույթում մամուլի մեջ («Մեծ բեկման տարին») յես զարգացրել եմ վորոշ փաստարկներ հոգուտ հողագործության մեջ մանր տնտեսության հանդեպ խոշոր տնտեսության ունեցած գերազանցության, նկատի ունենալով խոշոր խորհանտեսությունները: Հարկ ել չկա ապացուցելու, վոր այդ բոլոր փաստարկներն ամբողջապես ու լիովին վերաբերում են նաև կոլտնտեսություններին՝ վորպես խոշոր տնտեսական միավորների: Յես խոսում եմ վոչ միայն զարգացած, մեքենա-տրակտորային բազա ունեցող, կոլտնտեսությունների մասին, այլև առաջնային (սեր-բազմություն) կոլտնտեսությունների մասին, վորոնք ներկայացնում են կոլտնտեսային շինարարության, այսպես ասած, մանուֆակտուրային ժամանակաշրջանը և հենվում են գյուղական ինվենտարի վրա: Յես նկատի ունեմ այն առաջնային կոլտնտեսությունները, վորոնք ներկայումս ստեղծվում են համատարած կոլեկտիվացման շրջաններում և վորոնք հենվում են արտադրության գյուղացիական գործիքների սոսկական գումարման վրա: Վերցնենք, որինակ, նախկին Դոնի մարզում գտնվող Խոպլյորի շրջանի կոլտնտեսությունները: Արտաքուստ այդ կոլտնտեսությունները տեխնիկայի տեսակետից կարծես թե չեն տարրերվում մանր գյուղացիական տնտեսությունից (քիչ են մեքենաները, քիչ են տրակտորները): Մինչդեռ գյուղացիական գործիքների սոսկական գումարումը կոլտնտեսությունների ընդերքում տվել ե այնպիսի հֆեկտ, վորի մասին մեր պրակտիկները չեյին ել յերազում: Ինչո՞ւմ արտացյալեց այդ եֆեկտը: Նրանում, վոր կոլտնտեսությունների ուելսերի վրա անցնելը տվեց ցանքի արդրածության 30, 40 և 50% ընդարձակում: Ինչո՞վ բացարձել այդ «գլխապտույտային» եֆեկտը: Նրանով, վոր գյուղացիները, վորոնք անզոր եյին անհատական աշխատանքի պայմաններում, մեծադրույն ուժի փոխարկվեցին, իրենց գործիքները գումարելով ու կոլտնտեսությունների մեջ միավորվելով: Նրանով, վոր գյուղացիները հարավորություն ստացան մշակելու անհատական աշխատանքի պայմաններում դժվար մշակվող լքած հողերն

1 Ըստգծումն իմն ե: Խ. Ստ.:

ու խոպանները։ Նրանով, վոր գյուղացիները հնարավորություն ստացան իրենց ձեռքը վկրցնելու խոպանները։ Նրանով, վոր հնարավորություն ստացվեց զործի գցելու պարապուտները (ՊԱՍՏԱՐԻ), Հողի առանձին պատառները, միջնակները և այլն և այն։

Լքած Հողերի ու խոպանների մշակման հարցը Հոկայական նշանակություն ունի մեր գյուղատնտեսության համար։ Դուք դիտեք, վոր միուսաստանում հին ժամանակներում հեղափոխական շարժման առանցք ծառայում եր ազգաբային հարցը։ Դուք դիտեք, վոր ազգաբային շարժման նպատակներից մեկն ել սակավահողության վոչչացումն եր։ Այն ժամանակ շատերը կարծում եյին, թե այդ սակավահողությունը բացարձակ է, այսինքն՝ վոր ԽՍՀՄ-ում այլևս մշակության համար պիտանի ազատ հողեր չկան։ Իսկ ի՞նչ պարզից իրականում։ Այժմ բոլորի համար պարզ է, վոր ԽՍՀՄ-ում կային ու մնացել են տասնյակ-միլիոնավոր հեկտար աղատ հողեր։ Բայց գյուղացին իր խղճուկ զործեքով դրանք մշակելու վոչ մի հնարավորություն չուներ։ Յեվ հենց այն պատճառով, վոր նա խոպաններն ու լքած հողերը մշակելու հնարավորություն չուներ, հենց այդ պատճառով ել նա ձգտում եր զեպի «փափուկ հողերը», զեպի կալվածատերին պատկանող հողերը, զեպի այն հողերը, վորոնք հարմար եյին անհատական աշխատանքի պայմաններում գյուղացիական ինվենտարի ուժերով մշակելու համար։ Ահա թե ինչն եր «սակավահողության» հիմքը։ Ուստի զարմանալի չե, վոր մեր Հատիկորեստն այժմ հնարավորություն ունի զործի գցելու մոտ քսան միլիոն հեկտար աղատ հողեր, վորոնք գյուղացիները չեն զբաղեցնում, և վորոնք չեն կարող մշակվել անհատական աշխատանքի կարգով մանր-գյուղացիական ինվենտարի ուժերով։

Կոլտնեսացին շարժման նշանակությունը նրա բոյոր փուլերում, —թե՛ նրա առաջնային փուլում, թե՛ ավելի զարգացած փուլում, յերբ նա զինված և տրախորներով, —այն է, վոր գյուղացիներն այժմ հնարավորություն են ստանում զործի գցելու լքած հողերն ու խոպանները։ Սրա մեջ է գյուղացիների կողմից կոլեկտիվ աշխատանքի անցնելու ժամանակի շանքի տարածությունները Հոկայական շափով ըն-

դարձակելու գաղանիքը։ Սրա մեջ է անհատական պյուղացիական տնտեսության նկատմամբ կոլտնեսությունների ունեցած գերազանցության հիմքերից մեկը։

Ինչ ասել կուզի, վոր կոլտնեսությունների գերազանցությունն անհատական գյուղացիական տնտեսությունից ել ավելի անվիճելի կդառնա, յերբ համատարած կոլեկտիվացման շրջաններում առաջնային կոլտնեսություններին ոգնության հհամանեն մեքենա-արակատորային կայաններն ու շարանները (ԿՈԼՈՒՆ), յերբ կոլտնեսություններն իրենք հնարավորություն կտանան իրենց ձեռքում արակտորներու կոմբայններ կենարուացնելու։

#### IV

### ՔԱՂԱՔՆ ՈՒ ԳՅՈՒՂԾ

Գոյություն ունի բուրժուական տնտեսագետների կողմից սնվող մի նախապաշտօնունք այսպիս կոչված «մերատի» մասին, նախապաշտօնությունը, վորին հարկավոր է անողոք կորիք հայտարարել, ինչպես նաև բոլոր մյուս բուրժուական թեորիաներին, վորոնք, գերախտարար, տարածված են իրահրդային մամուլում։ Եւս նկատի ունեմ այն թեորիան, թե Հոկատեմբերյան հեղափոխությունը գյուղացիության իր թե ավելի քիչ բան և տվել, քան Փետրվարյան հեղափոխությունը, թե Հոկատեմբերյան հեղափոխությունն, իսկապէս առած, վոչինչ չի տվել գյուղացիությանը։ Այդ նախապաշտօնքը մի ժամանակ մեր մամուլում հրահրաւմ եր «Փորհրդային» տնտեսագետներից մեկը։ Ճիշտ է, նու, այդ «Փորհրդային» տնտեսագետը, հեռագայում հրահրավեց իր թեորիայից։ (Մի ձայն. «Իսկ ո՞վ է դա»)։ Դա—Գրումանն է։ Բայց այդ թեորիան վորգեղից արոցիստական-զինովյանցին ու ոգտագործեց կուսակցության զեմ։ Ընդգործում վոչ մի հիմք չկա պնդելու, վոր այն ներկայութուն ել տարածված չի «Փորհրդային» հասարակայնության շրջաններում։ Սա չափ կարեւոր հարց է, ըսկերներ։ Նա շոշափում է քաղաքի ու գյուղի փոխհարաբերությունների պըռլեմբ։ Նա շոշափում է քաղաքի ու գյուղի հակադրության վրորլեմբ։ Նա շոշափում է տեհնատկ-



տուալ հարցը «մկրատի» վերաբերյալ: Ուստի յես կարծում եմ, վոր արժե այդ տարորինակ թեորիայով զբաղվել:

Ճի՞շտ ե արդյոք, վոր գյուղացիները Հոկտեմբերյան հեղափոխությունից վոչինչ չեն ստացել: Դիմենք փաստերին:

Իմ ձեռքին ե հայտնի վիճակադիր ընկ. Նեմչինովի հայտնի աղյուսակը, վոր հրապարակված ե իմ «Հացի ճակատում» հոդվածում: Այդ աղյուսակից յերևում ե, վոր մինչհեղափոխական ժամանակներում կալվածատերերն «արտադրում եյին» վոչ պակաս քան 600 միլիոն փութ հացահատիկ: Հետեւարար, կալվածատերերն այն ժամանակ 600 միլիոն փութ հացի տեր եյին: Կուլակներն այն ժամանակ «արտադրում եյին» 1.900 միլիոն փութ հաց: Այդ շատ մեծ ուժ ե, վորի տերն եյին այն ժամանակ կուլակները: Իսկ չքավորությունն ու միջակներն արտադրում եյին 2.500 միլիոն փութ հաց: Այսպես ե դրության պատկերը հին, մինչև Հոկտեմբերյան հեղափոխությունը յեղած գյուղում:

Ի՞նչ փոփոխություններ կատարվեցին գյուղում Հոկտեմբերից հետո: Թվերը վերցնում եմ հենց նույն աղյուսակից: Վերցնենք, որինակ, 1927 թվականը: Իսկ կալվածատերերն այդ տարում վո՞րքան են արտադրել: Պարզ ե, վոր նրանք վոչինչ չեն արտադրել և չեյին կարող արտադրել, վորովհետեւ Հոկտեմբերյան հեղափոխությունը վուշնացրել եր կալվածատերերին: Դուք կհասկանաք, վոր այդ պետք ե մեծ թեթևացում լինեք գյուղացիության համար, վորովհետեւ գյուղացիներն ազատվեցին կալվածատերական լծից: Այդ, իհարկե, մեծ ոզուտ ե գյուղացիության համար, վոր նա ստացել ե Հոկտեմբերյան հեղափոխության հետեւանքով: Վո՞րքան են արտադրել կուլակները 1927 թվականին: 600 միլիոն փութ հաց 1.900 միլիոն փթի փոխարեն: Հետեւարար, Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո յեղած ժամանակաշրջանում կուլակները թուլացել են ավելի քան յերեք անգամ: Դուք կհասկանաք, վոր այս չեր կարող չթեթևացնել չքավորության ու միջակների դրությունը: Իսկ վո՞րքան են արտադրել 1927 թվականին չքավորությունն ու միջակները: 4 միլիարդ փութ՝ 2.500 միլիոն փթի փոխարեն: Հետեւարար, չքավորությունն ու միջակները

Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո սկսել են 1,5 միլիարդ փութ հաց ավելի արտադրել, քան մինչհեղափոխական ժամանակ:

Ահա ձեզ փաստեր, վորոնք խոսում են այն ժաման, վոր չքավորներն ու միջակները հոկտեմբերյան ոգուտ են ստացել Հոկտեմբերյան հեղափոխությունից:

Ահա թե ինչ ե ավել Հոկտեմբերյան հեղափոխությունը չքավորներին ու միջակներին:

Ի՞նչպես կարելի յե սրանից հետո պնդել, թե Հոկտեմբերյան հեղափոխությունը վոչինչ չի ավել գյուղացիներին:

Բայց ոտք ամենը չե, ընկերներ՝ Հոկտեմբերյան հեղափոխությունը վոչնչացրեց հողի մասնավոր սեփականությունը, վոչնչացրեց հողի առուժախիւ, հաստատեց հողի ազգայնացում: Այս ի՞նչ ե նշանակում ե, վոր դրույցին հաց արտադրելու համար բոլորովին կարիք չունի հող գնելու: Առաջներում նա տարիներով միջոցներ եր կուտակում, վորպեսզի հող ձեռք բերի, պարտքերի տակ եր ընկնում, ստրկացման եր դիմում, միայն թե հող ձեռք բերի: Հողի գնման ծախսերն, իհարկե, բարդվում եյին հացի արտադրության արժեքի վրա: Այժմ գյուղացին դրա կարիքը չունի: Այժմ նա կարող ե հաց արտադրել, առանց հող գնելու: Ի՞նչ ե՝ ոտք թեթևացնո՞ւմ ե գյուղացիների դրությունը, թե՞ չի թեթևացնում: Պարզ ե, վոր թեթևացնում ե:

Այսուհետեւ: Մինչեւ վերջին ժամանակներս գյուղացին հարկադրված եր հողը քչփորել հին ինվենտարով՝ անհատական աշխատանքի կարգով: Ամեն մեկին հայտնի յե, վոր արտադրության հին, այժմ արդեն անպետք գործիքներով զինված անհատական աշխատանքը չի տալիս այն ոգուտը, վորն անհրաժեշտ ե տանելի կերպով ապրելու, իր նյութական դրությունը սիստեմատիկաբար բարձրացնելու, իր կուլտուրան զարգացնելու և սոցիալիստական շինարարության լայն ճանապարհը դուրս զարու համար: Այժմ, կուտընտեսային շարժման ուժեղացրած զարգացումից հետո, գյուղացիները հարավորություն ունեն միավորելու իրենց աշխատանքն իրենց հարեանների աշխատանքի հետ, միավորեցները կուտնատեսության մեջ, հերկելու խոպանը, ողտադոր-

ծելու լքած հողը, ստանալու մեքենա ու տրակտոր և արդպիսով բարձրացնելու իրենց աշխատանքի արտադրողականությունը յերկու, յեթե զոչ յերեք անգամ: Իսկ այս ի՞նչ և նշանակում: Այս նշանակում է, զոր կոլտնտեսությունների մեջ միավորներու շնորհիվ դյուզացին այժմ հնարավորություն ունի առաջվանից շատ ավելի արտադրելու՝ նույն աշխատանքը ծախսելով: Հետեարար, այս նշանակում է, զոր հացի արտադրությունը շատ ավելի եժանանում է, քան այդ տեղի ուներ մինչև վերջին ժամանակներս: Այս նշանակում է, վերջապես, զոր գների կայունության հետևանքով դյուզացին հացի համար շատ ամենի կարող ե ստանալ, քան նա ստանում եր մինչեւ այժմ:

Ի՞նչպես կարելի յէ այս ամենից հետո պնդել, թե Հոկտեմբերյան հեղափոխությունն ողուտ չի տիեզ դյուզացիությանը:

Մի՞թե պարզ չե, զոր արդպիսի չեղած բաներ խոսող մարդիկ ակնհայտ կերպով ուուա ևն առում կուսակցության մասին, Խորհրդացին իշխանության մասին:

Բայց ի՞նչ է հետեւում այս ամենից:

Սրանից հետեւում է, զոր «մկրատի» հարցը, «մկրատի» վերացման հարցն այժմ նոր ձեռվ պետք է գրվի: Սրանից հետեւում է, զոր յեթե կոլտնտեսային արժուումն աճի այժմյան տեմզով, «մկրատը» կվաշնչացվի ամենամոտիկ ժամանակներս: Սրանից հետեւում է, զոր քաղաքի ու գյուղի փոխհարաբերությունների հարցը նոր հողի վրա յէ գրվում, զոր քաղաքի ու գյուղի հսկաղը թյունը կվողողվի-կօրրվի արագացրած տեմզով:

Այս հանգամանքը, ընկերնե՛ր, մեծադույն նշանակություն ունի մեր ամրող շինարարության համար: Նա փոխակերպում է գյուղացու հոգեբանությունը և զեպի քաղաք և զարձում նրա յերեսը: Նա հող և ստեղծում այն բանի համար, մորպեսի կուսակցության «յերեսներս զեպի գյուղ» տպուալը լրացվի կոլտնտեսական-դյուզացիների «յերեսներս զեպի քաղաք» լոգունով: Յեզ սրանում զարմանալու վոչինչ չկա, զորովհետեւ դյուզացին այժմ քաղաքից ստանում է մեքենա, արակտոր, սպրոնում,

կազմակերպիչ, վերջապես ուղղակի ովնություն՝ պայքարելու և կուրակությանը հաղթահարելու համար: Հին տիպի գյուղացին՝ իր գազանային անվտահությամբ դեպի քաղաքը, վորպես զեպի մի թալանող՝ հետին պրանի և անցնում: Նրան փոխարինում է նոր գյուղացին, կոլտնտեսական-գյուղացին, վորը քաղաքի վրա նայում է այնտեղից արտադրական ուեալ ողնություն ստանալու հուսով: Հին տիպի գյուղացուն, վորը վախենում էր չքավորության մեջ ընկնելուց ու միայն գաղտազողի յեր բարձրանում մինչև կուրակի գրությունը (կարող են ընտրական իրավունքից զրկե՛լ), փոխարինելու յէ զալիս նոր գյուղացին, վորն ունի նոր հեռամկար—կոլտնտեսություն մտնել ու թշվառությունից դուրս գալ տնտեսական վերելքի լայն ձանապարհը:

Ահա թե բանն ինչպիսի ընթացք և ստանում, ընկերնե՛ր:

Ավելի ևս ցագալի յէ, ընկերնե՛ր, զոր մեր թեորեմիկագրադեմները ձեռք չեն առել բոլոր միջնուները, վորպես զի փետրահան ու արմատախիլ անեն բոլոր ու ամեն տեսակի բուրդուական թեսությաները, վորոնք փորձում են պատկագերծ անել Հոկտեմբերյան հեղափոխության նվաճումներն ու կոլտնտեսային աճող շարժումը:

## V

### ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Կոլտնտեսությունները վորպես անտեսության տիպ սոցիալիստական տնտեսության ձեերից մեկն են: Սրա մասին զոչ մի կասկած չի կարող լինել:

Հոկտեմբերից մեկն այսուղի յերաշթ ունեցավ և պատկագերծ եր անում կոլտնտեսություններին: Նա հավատացնուած էր, զոր կոլտնախառությունները վորպես տնտեսական կազմակերպություններ վոչ մի ընդհանուր բան չունեն ուղնաւեսության սոցիալիստական ձեի հետ: Յես պետք է հայտարարեմ, ընկերնե՛ր, զոր կոլտնտեսություններն այլպես ընութագրեմ միանդամայն ախալ է: Տարակույս չի կարող լինել, զոր դա, այդ բնութագրումը, վոչ մի ընդհանուր բան չունի լենինիզմի հետ:

Ինչո՞ք է զորովհում տնտեսության տիպը: Ակների է,

վոր արտադրության սլորցեսի մեջ մարդկանց ունեցած հարաբերություններով։ Աւրիշ ել ինչո՞վ կարելի յե վորոշել անակառաւթյան սխպը։ Բայց մի՞թե կոլտնտեսության մեջ կա այնպիսի մարդկանց գասակարդ, վորոնք արտադրության մէջոցների սեփականատեր են, և այնպիսի մարդկանց գասակարդ, վորոնք զուրկ են արտադրության այդ միջոցներից։ Մի՞թե կոլտնտեսության մեջ կա շահագործողների դասակարդ և շահագործվողների գասակարդ։ Մի՞թե կալորեանասությունն արտադրության հիմնական գործիքների հանրայնացումը չե այն հողի վրա, վորը, բացի այդ, պետությանն ե պատկանում։ Ի՞նչ հիմք կա պնդելու, թե կոլտընտեսությունները վորպես տնտեսության տիպ սոցիալիստական տնտեսության ձևերից մեկը չեն։

Իհարկե, կոլտնտեսություններում հակասություններ կան։ Իհարկե, կոլտնտեսություններում կան անհատապաշտական և մինչեւ անգամ կուլակային մնացուկներ, վորոնք դեռևս չեն վերացել, բայց վորոնք ժամանակի ընթացքում անպատճառ պետք ե վերանան, ինչ չափով վոր կամրապնդվեն կոլտնտեսությունները, ինչ չափով վոր կմեքենացվեն նրանք։ Բայց մի՞թե կարելի յե ժխտել, վոր կուտանտեսություններն ամբողջությամբ առած, իրենց հակասություններով ու թերություններով հանդերձ, կոլտնտեսությունները վորպես տնտեսական գասատ հիմնականում դյուղի զարգացման նոր ուղին են, դյուղի սոցիալիստական զարգացման ուղին, ի հակադրություն զարգացման կուլակային, կապիտալիստական ուղու։ Մի՞թե կարելի յե ժխտել, վոր մեր պայմաններում կոլտնտեսությունները (յես խոսում եմ կոլտնտեսությունների և վոչ թե կեղծ կոլտնտեսությունների մասին) դյուղամ կատարվող սոցիալիստական շինարարության բաղան ու օջախն են, վորոնք աճել են կապիտալիստական տարրերի դեմ մղած կատաղի գոտեմարտերում։

Պարզ չե՞ միթե, վոր ընկերներից վոմանց փորձելը՝ պատկաներծ անելու կոլտնտեսություններ և նրանց հայտարարելու տնտեսության բուրժուական ձե—զուրկ են ամեն մի հիմքից։

1923 թվին մեղանում գեռես մտաայտական կոլտնտեսու-

յին շարժում չկար։ Լենինն իր «Կոռպերացիայի մասին» բրոյուրում նկատի ուներ կոռպերացիայի բոլոր աեսակները, նրա թե՛ սոսրին ձևերը (մատակարարող—վաճառահանող), թե՛ բարձր ձևերը (կոլտնտեսային ձևը)։ Իսկ այն ժամանակ ի՞նչ եր ասում նա կոռպերացիայի մասին, կոռպերատիվ ձեռնարկությունների մասին։ Ահա լենինի «Կոռպերացիայի մասին» բրոյուրի ցիտատներից մեկը.

«Թայություն ունեցող մեր կարգերում կոռպերատիվ ձեռնարկությունները տարրերվում են մասնավոր—կապիտալիստական ձեռնարկություններից վորպես կոլեկտիվ ձեռնարկություններ, բայց չեն տարրերվում սոցիալիստական ձեռնարկություններից, յեթե նրանք հիմնված են հողի վրա, այնպիսի արտադրամիջոցների առկայությամբ, վորոնք պատկանում են պետությանը, այսինքն՝ բանվոր դասակարգին»։

Հետևապես, լենինը լերցնում ե կոռպերատիվ ձեռնարկությունները վո՞չ թե ինքնին, այլ գոյություն ունեցող մեր կարգերի կապակցությամբ, այն կապակցությամբ, վոր նրանք դորձում են պետությանը պատկանող հողի վրա, մի յերկրում, վորտեղ արտադրության միջոցները պատկանում են պետությանը, —և այդ կարգով քննելով նրանք՝ լենինը պնդում ե, վոր կոռպերատիվ ձեռնարկությունները չեն տարրերվում սոցիալիստական ձեռնարկություններից։

Այսպես ե խոսում լենինն առհասարակ կոռպերատիվ ձեռնարկությունների մասին։

Պարզ չե՞ արդյոք, վոր ավելի ևս հիմք կա նույն այդ բանն ասելու մեր ժամանակաշրջանի կոլտնտեսությունների մասին։

Դրանով ել, ի միջի այլոց, բացարձում ե այն, վոր լենինը մեր պայմաններում տեղի ունեցող՝ «կոռպերացիայի սոսկական աճումը» սոցիալիզմի աճման հետ նույնական է համարում։

Դուք տեսնում եք, վոր կոլտնտեսությունները պատկաղիրծ անելով՝ վերոհիշյալ հոետորն ամենակապիս սխալը թույլ տվեց լենինիզմի հանդեպ։

Այդ սխալից բղիում ե նրա մի սրից սխալը—դառակարգային կովի մասին կոլտնտեսություններում։ Հոետորն

այնպես գումակ նկարագրեց գասակարգային կոփլը կոլտըն-  
տեսություններում, վոր կարելի յէ կարծել, թե դասակար-  
դային կոփլը կոլտնտեսություններում չի տարբերված կոլ-  
տնտեսություններից գուրս յեղած գասակարգային կովից :  
Դեռ ավելին. կարելի յէ կարծել, թե նա ե'լ ամելի կատաղի  
յէ դառնում այսուղ : Ասկայն միայն հիշատակված հսետո-  
րը չէ, վոր մեզափոր և այս բանում : Դասակարգային կոմի  
վերաբերյալ շաղակրատանքը, կոլտնտեսություններում յե-  
ղած գասակարգային կոմի վերաբերյալ ծղճղցն ու մնդըն-  
տոցն այժմ մեր բոլոր «Ճախ» աղմկաբարների բնորոշ գիծն  
եւ կարմում : Բատգորում այդ ճղճղոցի մեջ ամենակոմիկա-  
կանն այն ե, վոր այդ «ճղճղացողները» գասակարգային  
կոփլը «տեսնում են» այսուղ, վորանք այն չկա համ հա-  
մարյա չկա, բայց այն չեն տեսնում այսուղ, վորանք գո-  
յություն ունի այն և ամիերից զուրս և թափվում :

Դասակարգային կոմի տարբեր կա՞ն արդյոք կոլտըն-  
տեսությաններում : Այո՛, կան : Կոլտնտեսություններում  
դասակարգային կոմի տարբեր չեն կարող մինել, յեթե այն-  
ունդ պահպանվում են դեռևս անհատապաշտական կամ  
հույնիսկ կուլակային հոգեբանության մնացուկները, յեթե  
այնուեց դեռևս վորոշ անհավասարությունն կա : Կարելի՞ յէ  
արդյոք տսել, վոր դասակարգային կոփլը կոլտնտեսու-  
թյուններում համաստանշանակ և կոլտնտեսություններից  
դուրս տեղի ունեցող դասակարգային կոմին : Վո՞չ, չի կա-  
րելի : Մեր «Ճախ» Փրազյորների սիսակն ել հենց այն ե, վոր  
նրանք այդ տարբերությունը չեն տեսնում : Ի՞նչ և նշանա-  
կում գասակարգային կոփլ կոլտնտեսություններից գուրս,  
մինչև կոլտնտեսությունների գոյանալը : Դա նշանակում ե—  
պայքար կուլակի գեմ, վորն արտադրության գործիքների  
ու միջոցների տեր և և արտադրության այդ գործիքների  
ու միջոցների ողնությամբ ստրկացնում և չքափորությանը :  
Այդ պայքարը վո՞չ թե կյանքի, այլ մահու պայքար ե : Իսկ  
ի՞նչ և նշանակում գասակարգային կոփլ կոլտնտեսություն-  
ների բազայի վրա : Ամենից առաջ այդ նշանակում ե, վոր  
կուլակը ջախջախրված և զրկված արտադրության գործիք-  
ներից ու միջոցներից : Յերկրորդ, այդ նշանակում ե, վոր  
չքափորներն ու միջակները միավորված են կոլտնտեսու-

թյուններում՝ արտադրության հիմնական գործիքների ու  
միջոցների հանրայնացման բաղայի վրա : Վերջապես, այդ  
նշանակում ե, վոր բանը վերաբերում և այն պայքարին,  
վորը տեղի յէ ունենում կոլտնտեսությունների անդամների  
միջն, վորոնցից վորմանք դեռևս չեն աղատադրվել անհս-  
տապաշտական ու կուլակային մնացուկներից և փորձում են  
հոգուտ իրենց ողտագործել կոլտնտեսություններում յեղած  
վորոշ անհավատարությունը, իսկ մյոււները ցանկանում են  
կոլտնտեսություններից վորել այդ մնացուկներն ու այդ  
անհավատարությունը : Պարզ չե՞մ միթե, վոր միայն կուլակըը  
չեն կարող տեսնել կոլտնտեսությունների բաղայի վրա տե-  
ղի ունեցող գասակարգային կոմի և կոլտնտեսություններից  
գուրս տեղի ունեցող գասակարգային կոմի միջն յեղած  
տարբերությունը :

Սխալ կլինել կարծել, վոր յեթե արված են կոլտնտե-  
սությունները, ապա տրված և ամեն անհարժեշտը սոցիա-  
լիզմի կառուցման համար : Ավելի ևս սխալ կլիներ կարծել,  
թե կոլտնտեսությունների անդամներն արդեն սոցիալիստներ  
են դարձել : Վո՞չ, Հարկ կլինի դեռևս չատ աշխատելու այն  
բանի վրա, վորպեսզի վերակերտենք կոլտնտեսական-գյու-  
ղացուն, շտկենք նրա անհատապաշտական հոգեբանությունը  
և նրանից սոցիալիստական հասարակության իսկական աշ-  
խատագործ պատրաստենք : Յել այդ կկատարի այնքան ա-  
վելի չուտ, վորքան ավելի չուտ կմեքենացվեն կոլտնտեսու-  
թյունները, վորքան ավելի չուտ նրանք կտրակտորավորվեն :  
Բայց այս բնավ չի նսեմացնում կոլտնտեսությունների մե-  
ծագույն նշանակությունը, վորպես գյուղի սոցիալիստական  
փոխակերպման լծակի : Կոլտնտեսությունների մեծ նշանա-  
կությունն ել հենց այն ե, վոր նրանք հիմնական բազան են  
հողագործության մեջ մեքենաներ ու տրակտորներ գոր-  
ծադրելու համար, վոր նրանք հիմնական բազան են գյու-  
ղացու վերակերտման համար, նրա հոգեբանությունը պրո-  
լետարական սոցիալիզմի վորով վերամշակելու հտմար : Ա-  
նինն իրավայի յեր, յեր ասում եր .

«Մանք հողագործի վերամշակության, նրա ամբողջ հոգեբանության  
ու ընտելությունների վերամշակության գործը մի գործ ե, վորը սե-  
րունդներ և պահպանչում : Վճռել այս հարցը մամր հաղագործի նկատ-

ժամբ, ասուղայնել, այսպես ասած, նըս ամբողջ Հոգեքանությունը, կարող ե միայն նյութական բազան, տեխնիկան, տրակառների ու մեքնաների՝ մասսայական մասշտաբով կիրառումը հոգագործության մեջ, մասսայական մասշտաբով եւելտրիքիկացիան»:

Ո՞վ կարող ե ժխտել, վոր կոլտնտեսությունները սոցիալիստական տնտեսության հենց այն ձևն են, վորի միջացով ե միայն, վոր քաղմամիլիոն մասր գյուղացիությունը կարող ե հազորդակից լինել մեքենաներին ու տրակառներին, վարպետ տնտեսական վերելքի լծակների, վորպես գյուղատնտեսության սոցիալիստական զարգացման լծակների։

Այս ամենի մասին մոռացել են մեր «ձախ» Փրազյութերը։

Այս մասին մոռացել ե նաև մեր հոետորը։

## VI

### ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՏԵՂԱՇԱՐԺԵՐԸ ՅԵՎ ՇՐՋԱԴԱՐՁԸ<sup>1</sup> ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԶ

Վերջապես, դասակարգային տեղաշարժերին ու գյուղի կապիտալիստական տարրերի վրա սոցիալիզմի կտտարած հարձակմանը վերաբերող հարցը։

Վերջին տարվա ընթացքում մեր կատարած աշխատանքի բնորոշ գիծն այն է, վոր մենք, վորպես կուսակցություն, վորպես Խորհրդային իշխանություն՝ ա) ամբողջ ճակատով հարձակում ծավալեցինք գյուղի կապիտալիստական տարրերի դեմ, բ) այդ հարձակումը տվեց և շարունակում ե տալ, ինչպես հայտնի յե, խիստ շոշափելի դրական արդյունքներ։

Այս ի՞նչ ե նշանակում։ Այս նշանակում ե, վոր կուլակության շահագործողական տենդենցիների սահմանափակման քաղաքականությունից մենք անցել ենք կուլակությունը վորպես զառակարգ լիկվիդացիայի յենք-արկելու քաղաքականության։ Այս նշանակում ե, վոր մենք կատարել ենք ու շարունակում ենք կատարել մեր ամբողջ քաղաքականության վճռովական շրջադարձերից մեկը։

Մինչև վերջին ժամանակները կուսակցությունը կանգնած եր կուլակության շահագործողական տենդենցիների սահմանափակման դիրքում։ Հայտնի յե, վոր այդ քաղաքականությունը հոչտիմիկ եր դեռևս VІІІ համապատասխամ։

Նա, հենց այդ քաղաքականությունը, նորից ազգաբարվեց նեալը մտցնելիս և մեր կուսակցության XI համագումարում։ Բոլորն ել հիշում են լենինի հայտնի նամակը՝ ուղղված Պրեոբաժենակուն (1922 թ.), վորտեղ նա նորից ե վերադառնուած հենց այդպիսի քաղաքականություն կիրառելու անհամատելիության հարցին։ Այդ քաղաքականությունը, վերջապես, հաստատվեց մեր կուսակցության XV համագումարի կողմից։ Այդ քաղաքականությունն ել մենք կիրառում ենինք մինչև վերջին ժամանակներ։

Ճի՞շտ եր արդյոք այդ քաղաքականությունը։ Այդ՝ անպայման ճիշտ եր այն։ Արդյոք մենք մի հինգ կամ մի յերեք տարի առաջ կարո՞ղ ենինք կուլակության վրա այդպիսի հարձակման ձեռնարկել։ Մենք այն ժամանակ կարո՞ղ ենինք արդյոք հույս ունենալ այդպիսի հարձակման հաջողության վրա։ Վո՞չ, չեյինք կարող։ Այդ ամենայժանգավոր ավանդյուրիդը կլիներ։ Հարձակում կատարելու ամենալավագու մի խաղ կլիներ այդ։ Վորովհետեւ մենք հաստատապես կձախողվեյինք այդ դործում և, ձախողվելով, կամրացնեյինք կուլակության դիրքերը։ Ինչո՞ւ։ Վորովհետեւ մենք գեռնես չունեյինք այն հենակետերը գյուղում։ Հանձին խորհունտեսությունների ու կուլտնտեսությունների լայն ցանցի, վորոնց վրա կարելի կլիներ հենավել կուլակության դեմ վճռական հարձակում գործելիս։ Վորովհետեւ մենք այն ժամանակ հնարավորություն չունեյինք կուլակի կապիտալիստական արագական արտադրությունը փոխարինելու սոցիալիստական արտադրությամբ՝ կուլտնտեսությունների ու խորհունտեսությունների ձեռով։

1926—1927 թ. թ. պինովյեվյան պարոցկեսաւկան ուղողիցիան ուժոնապես կուսակցության վզին եր փաթաթում կուլակության դեմ անհապաղ հարձակում գործելու քաղաքականությունը։ Կուսակցությունը չդիմեց այդ վտանգավոր ավանդյուրին, վորովհետեւ նա դիտեր, վոր լուրջ մարդիկ չեն կարող հարձակում կատարելու խաղ թույլ տալ իրենց։ Կուլակության դեմ հարձակվելը լուրջ գործ ե։ Այն չի կարելի չփոթել կուլակության դեմ դեկլամացիա անելու հետ։ Այն նույնական չի կարելի չփոթել կուլակության հետ, վոր կուսակցության մեջ ամսային ականությունը հոչտիմիկ եր դեռևս VII համապատասխամ։

թյան վզին ուժգնորեն փաթաթում եր զինովյելյան-տրոցկիստական ոպովիցիան։ Հարձակվել կուլակության մյրա-այդ նշանակում ե ջարդել կուլակությանը և լիկլիդացիայի յենթարկել նրան վրավես դասակարդ։ Այս նպատակներից դուրս՝ հարձակումը գեկլամացիս յե, ճանկուռում, դատարկախոսություն, ամեն բան, ինչ կուղեք, միայն թե վոչ իս-կական բոլցելիյան հարձակում։ Հարձակվել կուլակության վրա-այդ նշանակում ե գործի պատրաստվել ու հարվածել կուլակությանը, բայց հարվածել նրան այնպես, վորպեսզե նա այլևս չկարողանա վոտքի կանոնել։ Հենց այս ե, վոր մեղանում, բոլցելիներիս մոտ, իսկական հարձակում ե կոչ-վում։ Արդյոք մի հինգ տարի կամ մի յերեք տարի սրանից առաջ մենք կարո՞ղ ենք արդպիսի հարձակման ձեռնար-կել՝ հաջողություն ունենալու հաշվով։ Վո՛չ, չեյինք կա-րող։

Իրոք, կուլակը 1927 թվին 600 միլիոն փթից ավելի հաց եր արտադրում, իսկ այդ գումարից արտադյուղական փո-խանակության կարգով արտահանում եր մոտ 130 միլիոն փութ։ Այս բավական լուրջ ուժ ե, վորի հետ չի կարելի հաշվի չնատել։ Իսկ ինչքա՞ն եյին արտադրում այն ժամանակ մեր կոլտնտեսություններն ու խորհունակությունները։ Մոտ 80 միլիոն փութ, վորից շուկա արտահանեցին (արդրանքային հաց) մոտ 35 միլիոն փութ։ Ինքներդ գատեցեք, արդյոք այն ժամանակ մենք կարո՞ղ ենք կուլակային արտադրու-թյունը և կուլակային արդրանքային հացը փոխարինել մեր կոլտնտեսությունների ու խորհունակությունների արտա-դրությամբ ու արդրանքային հացով։ Պարզ ե, վոր չեյինք կարող։ Ի՞նչ է նշանակում այդպիսի պարմաններում վճռա-կան հարձակման ձեռնարկել կուլակության դժմ։ Այդ նշա-նակում ե հաստատապես ճախողվել, ուժեղացնել կուլակու-թյան դերեքը և առանց հացի մնալ։ Ահա թե ինչու այն ժամանակ մենք չեյինք կարող ու չպիտի ձեռնարկեյինք հարձակման՝ կուլակության դեմ, հակառակ զինովյելյան-տրոցկիստական ոպովիցիայի արկածախնդրական դեկլամա-ցիաների։

Ե՛, իսկ ա՞յժմ։ Այժմ գործն ի՞նչ գրության մեջ ե։ Այժմ մենք բավարար նյութական բազա ունենք այն բանի-

համար, վորպեսզի հարվածենք կուլակությանը, կոտրենք նրա դիմադրությունը, միկմիդացիայի յենթարկենք նրան երբեք դասակարդ և նրա արտադրությունը փոխարինենք կոլտնտեսությունների ու խորհունակությունների արտա-դրությամբ։ Հայտնի յե, վոր 1929 թվին հացի արտադրու-թյունը կոլտնտեսություններում ու խորհունակություննե-րում կազմում եր 400 միլիոն փթից վոչ պակաս (200 միլիոն փթով պակաս կուլակային անտեսության 1927 թվի համա-խառն արտադրանքից)։ Այնուհետեւ հայտնի յե, վոր 1929 թվին կոլտնտեսություններն ու խորհունակությունները 130 միլիոն փթից ավելի արդրանքային հաց տվին (այսինքն՝ ա-վելի քան կուլակը 1927 թվին)։ Վերջապես, հայտնի յե, վոր 1930 թվին կոլտնտեսությունների ու խորհունակություն-ների հացի համախառն արտադրանքը կազմելու յե 900 մի-լիոն փթից վոչ պակաս (այսինքն՝ ավելի, քան կուլակի հա-մախառն արտադրանքը 1927 թվին), իսկ ապրանքային հաց նրանք կտան 400 միլիոն փթից վոչ պակաս (այսինքն՝ ան-համեմատ ավելի, քան կուլակը 1927 թվին)։

Ահա թե այժմ գործն ինչ գրության մեջ և մեղանում, ընկերներ։

Ահա թե ինչպիսի տեղաշարժում ե կատարվել մեղանում յերկրի եկոնոմիկայի մեջ։

Ահա թե դասակարգային ուժերի ինչովիսի տեղաշար-ժում ե կատարվել մեղանում վերջին ժամանակներս։

Այժմ մեղանում, ինչպես տեսնում եք, նյութական բա-զա կա այն բանի համար, վորպեսզի կուլակային արտա-դրությունը փոխարինենք կոլտնտեսությունների ու խորհ-ունակությունների արտադրությամբ։ Ահա թե ինչու մեր հարձակումը կուլակության զեմ այժմ անկառածելի հաջո-ղություն ունի։ Ահա թե ինչպես պետք ե հարձակվել կու-լակության վրա, յեթե իսպանի իսկական հարձակման մա-սին, և վոչ թե սահմանափակվենք կուլակության զեմ ուղղված սնամեջ դեկլամացիայով։

Ահա թե ինչու վերջին ժամանակներու կուլակության չափործողական տենդենցիները սահմանափակելու քաղա-քականությունից մենք անցանք կուլակությունը վորպես

Դասակարգ լիկվիդացիայի յենք-արկելու քաղաքականությանը:

Լավ, բայց ի՞նչպես վարվել կուլակաթափության քաղաքականության հետ, կարելի յե արդյոք կուլակաթափություն թույլատրել համատարած կուլակաթափման շրջաններում, — հարցնում են զանազան կողմերից: Ծիծաղելի՛ հարց: Կուլակաթափություն չեր կարելի թույլատրել, քանի զեռ մենք կանգնած ենինք կուլակաթյան շահագործողական տեսլենց-ների սահմանափակման տեսակետի վրա, քանի դեռ մենք հնարավորություն չունեյինք վճռական հարձակման անցնելու կուլակաթյան դեմ, քանի դեռ մենք հնարավորություն չունեյինք կուլակային արտադրությունը փոխարինելու կոլտնտեսությունների ու խորհտնտեսությունների արտադրությամբ: Այն ժամանակ կուլակաթափության անթույլատրելիության քաղաքականությունն անհրաժեշտ եր ու ճիշտ: Իսկ ա՞յժմ: Այժմ բանն ուրիշ է: Այժմ մենք հնարավորություն ունենք վճռական հարձակում գործելու կուլակաթյան վրա, կոտրելու նրա դիմադրությունը, վերացնելու նրան վորպես դասակարդ և նրա արտադրությունը փոխարինելու կոլտնտեսությունների ու խորհտնտեսությունների արտադրությամբ: Այժմ կուլակաթափությունը կատարում են իրենք չքալոր-միջակային մասսաները, վորոնք համատարած կոլեկտիվացում են իրականացնում: Այժմ կուլակաթափությունը համատարած կոլեկտիվացման շրջաններում արդեն հասարակ վարչական միջոցառում չե: Այժմ կուլակաթափությունն այնտեղ կոլտնտեսությունների կազմավորման ու զարգացման բաղկացուցիչ մասն է: Ահա թե ինչու այժմ կուլակաթափության մասին ընդարձակաբանելը ծիծաղելի ու անլուրջ բան է: Գլուխը կտրելուց հետո՝ մաղերի համար լաց չեն լինում:

Պակաս ծիծաղելի չի թվում մյուտ հարցը. կարելի՞ յե արդյոք կուլակին կոլտնտեսություն թողնել: Իհարկե, չի կարելի նրան կոլտնտեսություն թողնել: Չի կարելի, վորովհետեւ նա կոլտնտեսային շարժման յերդվյալ թշնամին է: Թվում ե, թե պարզ է:

VII

## ՅԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ահա, ընկերնե՛ր, վեց հանգուցային հարցեր, վորոնք կողքով չի կարող անցնել մեր մարքսիստ-ազգաբազետների թեորիական աշխատանքը:

Այս հարցերի նշանակությունն ամենից առաջ այն է, վոր նրանց մարքսիստական մշակումը հնարավորություն և առաջիս արմատահան անելու բոլոր ու ամեն տեսակի բուրժուական թեորիաները, վորոնք յերեմն—համոթ մեղադառնում են մեր ընկեր-կոմունիստները և վորոնք ազգությամբ են մեր պրակտիկների գլուխները: Իսկ արմատահան անել այդ թեորիաները և նրանց գեն շպրտել վաղուց եր հարկավոր: Վորովհետև այդ թեորիաների դեմ անողոք պայքար մղելով և միայն, վոր կարող ե ամել ու ամրանալ մարքսիստ-ազգաբազետների թեորիական միտքը:

Վերջապես, այս հարցերի նշանակությունն այն է, վոր նրանք նոր կերպարանք են տալիս անցման ժամանակաշրջանի եկոնոմիկայի հին պրոբլեմներին:

Այժմ նոր ձեռով և դրվում նեպի, դասակարգերի, կոլտնտեսությունների, անցման ժամանակաշրջանի եկոնոմիկայի հարցը: Հարկավոր և բացահայտել այն մարդկանց սիմալը, վորոնք նեպին ըմբռնում են վորպես նահանջ և միմիայն վորպես նահանջ: Իրականում լենինը գեռևո նեպը մտցնելիս ասում եր, վոր նեպը նահանջով չի սպառվում, վոր նա դրա հետ մեկտեղ նշանակում և նախապատրաստություն քաղաքի ու գյուղի կասիտալիստական տարրերի վրա վճռական նոր հարձակում գործելու համար Հարկավոր և բացահայտել այն մարդկանց սիմալը, վորոնք կարծում են, թե նեպը հարկավոր և քաղաքի ու գյուղի միջև յեղած կապի համար միայն: Մեղ հարկավոր և վոչ ամեն տեսակի կապ քաղաքի ու գյուղի միջև: Մեղ հարկավոր և այնպիսի մի կապ, վորն ապահովում և սոցիալիզմի հաղթությունը: Յեկ յեթե մենք նեպի կողմանակից ենք, ապա այն պատճառով, վոր այն ծառայում և սոցիալիզմի գործին: Իսկ յերբ այն դաշտարի սոցիալիզմի գործին ծառայելուց, մենք այն գրողի ծոցը կնետենք: Լենինն ասում եր, վոր նեպը մտցված

ե լրջորեն ու յերկար ժամանակով։ Բայց նա յերբեք չի առաջ, թէ նեղը մտցված է ընդմիշտ։

Հարկավոր է նույնպես գնել վերաբառության ժարք-սիստական թեորիան մասսայականացնելու հարցը։ Հարկա-վոր է մշակել մեր ժողովրդական անտեսության հաշվեկշռի կառուցման սխեմայի հարցը։ Այն, ինչ հրապարակված եւ կենտրոֆիճվարի կողմից 1926 թվին ժողովրդական անտեսու-թյան հաշվեկշռի ձևով, դա վո՛չ թէ հաշվեկշռու ե, այլ թվախաղ։ Գործին չի համապատասխանում նաև ժողովրդա-կան անտեսության հաշվեկշռի պրոբլեմի վերաբերյալ հա-զարովի ու Գրոմանի տված մեկնաբանությունը։ ԽՍՀՄ-ի ժողովրդական անտեսության հաշվեկշռի սխեման պետք ե մշակեն հեղափոխական մարքսիստները, յեթէ նրանք ընդ-հանրապես ցանկանում են զբաղվել անցման ժամանա-կաշընի եկոնոմիկայի հարցերի մշակմամբ։

Լավ կլիներ, յեթէ մեր մարքսիստ-անտեսադետները դատելին աշխատողների մի հատուկ խումբ՝ անցման ժա-մանակաշրջանի եկոնոմիկայի ոլորբեմները նբանց նոր դրումով մշակելու համար։

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Եջ

I.	«Հավասարակշռության» թեորիան . . . . .	5
II.	«Ինքնահոսի» թեորիան սոցիալիստական շինարա- րության մեջ . . . . .	8
III.	Մ'անը-գյուղացիական անտեսության «կայու- նության» թեորիան . . . . .	11
IV.	Քաղաքն ու գյուղը . . . . .	17
V.	Կոլտնտեսությունների բնության մասին . . . . .	21
VI.	Դասակարգային տեղաշարժերը և ըրջադարձը կուսակցության քաղաքականության մեջ . . . . .	26
VII.	Ցեղակացություններ . . . . .	31



Հայերեն թարգմանությունը խմբագրեց Բ. Մարտիրոսյան

Տեխն. խմբ. Ս. Խաչատրյան

Սըբագրիչ Հ. Մանվելյան

Կոնոքոր սըբագրիչ Լ. Արովյան

Գլուխութիւն լիազոր Նկ—3341, հրատ. Ն 616

Պատվեր Նկ 173, տիրաժ 5.000

Հանձնվել է արտադրության 21/XI 1938 թ.

Սառագրվել է մպագրելու 21/XII 1938 թ.

Գինը 25 կ. կազմը 80 կ.

Գետհրատ—Քաղաքական գրականության հրատարակչության  
ապահով, Թերեան, Ազավերդյան Նկ 95

ՀՀ Ազգային գրադարան



NL0179069

ԳԻՒՐ 50 Կ.

И. СТАЛИН

К ВОПРОСАМ АГРАРНОЙ  
ПОЛИТИКИ В СССР

Армгиз—Издательство полит. литературы  
Ереван, 1939